Դատական Գործ N: ԵԿԴ/3102/02/08

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	21-10-2008
Հայցվոր/դիմող	
Անուն:	Ապեյրոն ՍՊԸ
Հասցե:	Ֆրիկի 2շ, բն 26
Ներկայացուցիչ	
Անուն	Լեռնիկ
Ազգանուն	Հովհաննիսյան
Հասցե	Անդրանիկի 43շ, բն 50
Պատասխանող	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	ապրանքատեսակներ հանդիսանալու փաստի հաստատման մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	8.10
Պետական տուրք:	2000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	

Ամսաթիվ:	21-10-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Գայանե Թաթուլի Կարախանյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	

Որոշման ամսաթիվ:	23-10-2008
Դատաքննության ամսաթիվ:	07-11-2008
Դատաքննության ամսաթիվ:	24-12-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	24-10-2008
Այլ նշումներ:	
ժամ:	
Դատաքննության ամսաթիվ:	21-01-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	15-01-2009
Այլ նշումներ:	
ժամ:	14:30
Նիստերի դահլիճի համար:	5
Հայցի լուծման ամսաթիվ:	26-01-2009
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	189-191, 130-132
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ (վճիռ, որոշում):	Գործ ԵԿԴ3102/02 2008թ . Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 26.01.2009թ ք. Երևան ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ ՄԱՐԱՇ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ Նախագա հությամբ՝ Դատավոր՝ Գ.Կարախանյան Քարտուղարությամբ՝ Մասնակցությամբ՝ Դիմողի ներկայացուցիչ՝ Ա.Սայադյան Լ.Հովհաննիսյան Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի դիմումի՝ Ապեյրոն ՍՊԸ-ի ՀՎՀՀ՝ 02569173, վկայական 03Ա 061323/ ՝ իրավաբանական փաստի հաստատման պահանջի մասին Պ Ա Ր Զ Ե Ց Գործի դատավարական նախապատմությունը

Դիմումը մուտք է եղել 21.10.2008 թվականին, նախագահի կողմից մակագրվել է, 21.10.2008թվականին, վարույթ է ընդունվել 23.10.2008 թվականին:
Դիմողի դիրքորոշումը
Դիմողի ներկայացուցիչը դիմելով դատարան հայտնել է, որ «Ապեյրոն» ՍՊԸ-ն(այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է արտաքին տնտեսական գործունեության(այսուհետ՝ ԱՏԳ) մասնակից: Տարիների ընթացքում Ընկերությունը գործարար կապեր է հաստատել հրուշակեղենի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա հետևյալ հանրահայտ ընկերությունների/այսուհետ՝ Գործընկերներ/ հետ.
• Ուկրաինական «Պո Կոնտի» ՓԲԸ-ի,
• «Զապորոժի հրուշակեղենի գործարան» ԲԲԸ-ի,
• «Պոլտավակոնդիտեր» ԲԲԸ-ի,
• «ԱՄ «ԿՈՆՏԻ» ՓԲԸ-ի ,
• «ԿՈՆՏԻ-ՌՈՒՍ» ՓԲԸ-ի,
• «Ռոշեն» /Ուկրաինա, ք.Կիեվ/ «Հրուշակեղենային կորպորացիա» Դուստր Ձեռնարկության,
• «Կոնդֆիլ» Խմելնիցկի հրուշակեղենի գործարան ՓԲԸ-ի
• «Ժիտոմիրի լասոշչի» ՓԲԸ-ի,
• «Խերսոնի հրուշակեղենի գործարան» ՓԲԸ-ի,
• «Օդեսսակոնդիտեր» ՓԲԸ-ի:
Արդյունքում ձևավորված գործարար կապերն այժմ պայմանագրային հարաբերությունների բնույթ են կրում: Ընկերությունը դարձել է վերը նշված ընկերությունների ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության տարածքում և այժմ էլ իրականացնում է Գործընկերների արտադրանքի ներմուծումն ու մանրամեծածախ իրացումը:
Ներկայումս Գործընկերների արտադրանքի նկատմամբ ՀՀ սպառողական շուկայում առկա է մեծ հետաքրքրություն ու պահանջարկ: Նման իրավիճակում հնարավոր է, որ այլ տնտեսվարողների կողմից Գործընկերների անվան, նրանց ապրանքատեսակների շահարկումների արդյունքում կարող է սպառողների և մանրամեծածախ առևտրով զբաղվող այլ ընկերությունների, անհատ ձեռնարկատերերի մոտ սխալ տպավորություն ստեղծվի.
ինչպես՝ ՀՀ-ում Գործընկերների իրական ներկայացուցիչ ու համապատասխան արտադրատեսակներ ներմուծող սուբյեկտի հարցում, ինչն իր հերթին կհանգեցնի Ընկերության, որպես ՀՀ-ում Գործընկերների ներկայացուցչի ու տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտի իրավունքների սահմանափակման կամ խախտման, իսկ դրա արդյունքում և՛ Ընկերությունը, և՛ սպառողները, և՛ Գործընկերները վնասներ կկրեն,
այնպես էլ՝ Ընկերության կողմից ներկրվող ապրանքատեսակներ հանդիսանալու հարցում:
Բացի այդ, Գործընկերները դիմել են Ընկերությանը և խնդրել, որպեսզի իրենց տրամադրվի հավաստում առ այն, որ, դեռևս խորհրդային ժամանակներից մեծ ճանաչում ձեռք բերած, իրենց կողմից արտադրվող և Ընկերության կողմից ՀՀ ներմուծվող ապրանքները ՀՀ-ում հանդիսանում են համընդհանուր կիրառում ստացած նշանի ապրանքատեսակներ:
Հարցի իրավական կարգավորման նպատակով, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր. հոդվածներ 189-191-ով խնդրել են հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Գործընկերների կողմից արտադրվող, «Ապեյրոն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ներմուծվող ու կից ցանկով ներկայացվող ապրանքները ՀՀ-ում հանդիսանում են համընդհանուր կիրառում ստացած նշանի ապրանքատեսակներ:
Լսելով դիմողի ներկայացուչին, հետազոտելով գործում առկա ապացույցները և գնահատելով դրանք, դատարանը գտնում է, որ դիմումը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:
Դատաքննությամբ հաստատված փաստերն են.

• Գործում առկա են մի շարք փաստաթղթեր, որոնցով հաստատվում է այն հանգամանքը, որ Ապեյրոն ՍՊԸ-ն հանդիսանում է գործընկերների՝ Ուկրաինական «Պո Կոնտի» ՓԲԸ-ի, «Զապորոժի հրուշակեղենի գործարան» ԲԲԸ-ի,«Պոլտավակոնդիտեր» ԲԲԸ-ի, «ԱՄ «ԿՈՆՏԻ» ՓԲԸ-ի ,«ԿՈՆՏԻ-ՌՈՒՍ» ՓԲԸ-ի, «Ռոշեն» /Ուկրաինա, ք.Կիեվ/ «Հրուշակեղենային կորպորացիա» Դուստր Ձեռնարկության, «Կոնդֆիլ» Խմելնիցկի հրուշակեղենի գործարան ՓԲԸ-ի, «Ժիտոմիրի լաստշչի» ՓԲԸ-ի, «Խերսոնի հրուշակեղենի գործարան» ՓԲԸ-ի,«Օդեսսակոնդիտեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության տարածքում և ըստ ներկայացված ցուցակների մատակարարումէ ապրանքների տեսակները::
• Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության 27.12.2008 թվականի պատասխանի՝ հայտնվել է, որ Ձեր բարձրացրած հարցը /որով խնդրվել է տրամադրել տեղեկատվություն թե «որոշակի տեսակի ապրանքային նշանը որպես համընդհանուր կիրառում ստացած նշանի փաստի ճանաչումը» ՀՀ մտավոր սեփականության գործառույթ է, եթե ոչ, ապա որ մարմնի/ կարգավորվում է «Ապրանքային և սպասարկման նշանների , ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին ամսի «զ» կետով:
Դատարանի իրավական վերլուծություններ
ՀՀ քաղ. դատ. օր-ի 191 հոդվածի համաձայն իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումում պետք է նշվի թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև բերվեն դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու համար ապացույցներ:
Դատաքննությամբ հիմնավորվեց, որ նշված իրավաբանական փաստի հաստատումը դիմողին անհրաժեշտ են, քանի որ ներկայումս Գործընկերների արտադրանքի նկատմամբ ՀՀ սպառողական շուկայում առկա է մեծ հետաքրքրություն ու պահանջարկ:
Նման իրավիճակում հնարավոր է, որ այլ տնտեսվարողների կողմից Գործընկերների անվան, նրանց ապրանքատեսակների շահարկումների արդյունքում կարող է սպառողների և մանրամեծածախ առևտրով զբաղվող այլ ընկերությունների, անհատ ձեռնարկատերերի մոտ սխալ տպավորություն ստեղծվի. ինչպես՝ ՀՀ-ում Գործընկերների իրական ներկայացուցիչ ու համապատասխան արտադրատեսակներ ներմուծող սուբյեկտի հարցում, ինչն իր հերթին կհանգեցնի Ընկերության, որպես ՀՀ-ում Գործընկերների ներկայացուցչի ու տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտի իրավունքների սահմանափակման կամ խախտման, իսկ դրա արդյունքում և՝ Ընկերությունը, և՝ սպառողները, և՝ Գործընկերները վնասներ կկրեն, այնպես էլ՝ Ընկերության կողմից ներկրվող ապրանքատեսակներ հանդիսանալու հարցում: Բացի այդ, Գործընկերները դիմել են Ընկերությանը և խնդրել, որպեսզի իրենց տրամադրվի հավաստում առ այն, որ, դեռևս խորհրդային ժամանակներից մեծ ճանաչում ձեռք բերած, իրենց կողմից արտադրվող և Ընկերության կողմից ՀՀ ներմուծվող ապրանքները ՀՀ-ում հանդիսանում են համընդհանուր կիրառում ստացած նշանի ապրանքատեսակներ:
ՀՀ քաղ. դատ. օր-ի 192 հոդվածի համաձայն դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հաստատելու պատշաճ փաստաթղթեր, իսկ 193 հոդվածի համաձայն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ դատարանի վճիռը հիմք է համապատասխան մարիների կողմից այդ փաստը գրանցելու կամ հաստատված փաստի կապակցությամբ իրավունքները ձևակերպելու համար:
Այն հանգամանքը, որ վերը նշված փաստը պետք է հաստատվի

դատարանի միջոցով հիմնավորվում է նաև «Ապրանքների և սպասարկման նշանների, ապրանքների ծագման և տեղանունների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 1-ին կետի զ ենթակետով, համաձայն որի՝ լիազոր մարմինն ապրանքային նշանի գրանցումը չեղյալ է հայտարարում նաև՝… ցանկացած անձի դիմումի համաձայն, դատարանի որոշմամբ ապրանքային նշանը ճանաչվել է որոշակի տեսակի ապրանքերի նշման վերացված և համընդհանուր կիրառում ստացած նշան.
Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-191, 130-132 -րդ հոդվածներով, դատարանը
Վ Ճ Ռ Ե Ց
• Դիմումը բավարարել: Հաստատել իրավանական նշանակություն ունեցող այն փաստը, որ գործընկերների՝ Ուկրաինական «Պո Կոնտի» ՓԲԸ-ի, «Զապորոժի հրուշակեղենի գործարան» ԲԲԸ-ի,«Պոլտավակոնդիտեր» ԲԲԸ-ի, «ԱՄ «ԿՈՆՏԻ» ՓԲԸ-ի,«ԿՈՆՏԻ-ՌՈՒՍ» ՓԲԸ-ի, «Ռոշեն» /Ուկրաինա, ք.Կիեվ/ «Հրուշակեղենային կորպորացիա» Դուստր Ձեռնարկության,
«Կոնդֆիլ» Խմելնիցկի հրուշակեղենի գործարան ՓԲԸ-ի, «Ժիտոմիրի լասոշչի» ՓԲԸ-ի, «Խերսոնի հրուշակեղենի գործարան» ՓԲԸ-ի, «Օդեսսակոնդիտեր» ՓԲԸ-ի կողմից արտադրվող , «Ապեյրոն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ներմուծվող ու կից ցանկով ներկայացվող /դեռևս Խորհրդային ժամանակներից մեծ ճանաչում ձեռք բերած/ ապրանքները հանդիսանում են համընդանուր կիրառում ստացած նշանի ապրանքատեսակներ:
Ցանկ
Արտադրանքի անվանումը Չափման միավորը կգ/հատ Քաշը մեկ արկղում
կգ/հատ պահպանման ժամկետը
/օրերով/
1 Կոնֆետներ ջնարակված պրալինային
Սկյուռիկ գետնընկույզով 5 180
Կարա-Կում 1 120
Կարմիր կակաչ 1 120
Հրաշագործուհի 3 180
1 Կոնֆետներ ջնարակված պոմադային
Աստղագուշակ սուրճի համով կոնյակով 5 180
Աստղագուշակ սուրճի համով սերուցքով 5 180
Առաջին ծիծեռնակ 5 180
Դաշտային երիցուկ 5 180

3 Կարամել
Բարբարիս-նովա կարամել կգ 5 270
Թռիչքային-նովա կարամել կգ 5 270
Սագի տոտիկներ կգ 5 120
Դյուշես նովա կարամել կգ 5 270
Ոսկե խեցգետիկներ կարամել կգ 5 120
Սիրելի կովիկ կարամել կգ 5 270
Մու-մու կարամել կգ 5 270
Մու-մուշկա կարամել կգ 5 270
Անանուխի-նովա կարամել կգ 5 270
Թխվածքաբլիթ շաքարային
Մու-մուշկա թխվ. կգ 8 150
Կշռված-փաթեթավորված կարամել
Մու-մուշկա թխվ. հատ 36 150

Մանրածախ Կշռային ջնարակված
Գրիլյաժ Մերձասիական կգ 4 150
Նոր Պրոմեթևս կգ 4 120
Մանրածախ խոշորաված ձևով
Ումկա հատ 144 120
Մանրածախ Կշռված-փաթեթավորված

Ձեզ համա հատ 5 120
Ձեզ համար հատ 5 90
Նոր Պրոմեթևս հատ 12 90
Թռչնի կաթ հատ 15 60

2. «Ապեյրոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «Պոլտավակոնդիտեր» ԲԲԸ-ի ներկայացուցիչը ՀՀ-ում, և նրա կողմից ՀՀ տարածք մատակարարվում են ապրանքների հետևյալ տեսակները.

Արտադրանքի անվանումը Քաշը Արժեքը ԱՄՆ դոլարով
Պահպանման ժամկետը
Քաշը կգ
Գրիլյաժե կոնֆետներ՝ ջնարակված հրուշակային ջնարակով
Նոր Պրոմեթևս/Ընկուզե աշխարհ չամիչով 1000 2.94/2.93 180 3.5

Գրիլյաժե կոնֆետներ՝ ջնարակված շոկոլադե ջնարակով
Նոր Պրոմեթևս/Ընկուզե աշխարհ-սուպեր չամիչով 1000 2.94/2.93 180 3.5

Կոնֆետներ արկղերով
Սկյուռիկ գետնընկույզով 250/150 1.11/0.79 180 8
Ռոմեո և
Ջուլետտա 300 1.36 120 8
Գայթակղություն Դոմինիկից 250 1.55 120 5
Պրոմեթևս/
Մետեորիտ 250 1.38/3.18 180 6
Շոկոլադ
Դոմինիկ կաթնային Չայկա 100 0.51 210 34
Կոնֆետներ՝ ջնարակված հրուշակային ջնարակով պրալինային միջուկով
Սկյուռիկ ոսկե ընկույզով 1000 2.24 180 2.5
Պոլտավայի թռչնի կաթ 250 1.27 60 6
Կարամել
Մու-Մու հրաշագործուհի 1000 1.28 180 4
Իմ պտաշկա 1000 1.31 180 4
Իրիս
Կախարդական ոսկե բանալի սերուցքի համով 1000 1.53 150 3.5

3., 4. «Ապեյրոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «ԱՄ «ԿՈՆՏԻ» ՓԲԸ-ի և «ԿՈՆՏԻ-ՌՈՒՍ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը ՀՀ-ում, և նրա կողմից ՀՀ տարածք մատակարարվում են ապրանքների հետևյալ տեսակները.
• Բիսկվիտ /Մինի-ռուլետ; Ձնարակված ռուլետներ; Ոչ ջնարակված ռուլետներ;Տորթեր; մինի-տորթեր/;
• Վաֆլե արտադրանք /’Ոչ ջնարակված վաֆլիներ, շոկոլադե-վաֆլե տորթեր, խոշորացված վաֆլե-շոկոլադե տորթեր, կշռված-փաթեթավորված վաֆլիներ/;
• Դեսերտ /Բոնժուր,Բոնժուր, բոնժուր մինի/;
• Դրաժե շաքարապատած;
• Դրաժե «Amour»;
• Դրաժե «GT club»;
• Կարամել /կարամել ջնարակված, կարամել կաթնային, կարամել զովացուցիչ միջուկով, կարամել շոկոլադե-ընկուզե/;
• Կոնֆետներ /կոնֆետներ պոմադային ջնարակված, «Բելիսսիմո» Classic, «Բելիսսիմո» Luxe, «Բելիսսիմո» Original, «Մելոդիկա», կոնֆետներ «Տոֆիտա», Կոնֆետներ կշռված-փաթեթավորված/;
• Կրեկեր; Թխվածքաբլիթ / Թխվածքաբլիթ կշռային ոչ ջնարակված, Թխվածքաբլիթ կշռված-փաթեթավորված, Թխվածքաբլիթ-սենդվիչ կշռային, Թխվածքաբլիթ-սենդվիչ-կշռված-փաթեթավորված;

	• Շոկոլադ /Շոկոլադե սալիկներ, Շոկոլադե կոնֆետներ; • Տարտալետկաներ «Շանտալ»: Անվանումը Չափման միավորը Կոնֆետներ կշռված-փաթեթավորված Թռչնի կաթ 250գ Զնարակված կոնֆետներ պոմադային կորպուսով «Արջուկ սերուցքով» կգ «Արջուկ ընկույզով» կգ «Ումկա-Կոնտի» կգ «Ումկա-Կոնտի իրիսով» կգ «Երիցուկ» կգ Կարամել կաթնային միջուկով «Պտաշկա-Կոնտի» կգ «Մու-Մու-Կոնտի» կգ «Բուրատինո-Կոնտի» կգ Կարամել շոկոլադե-ընկուզե միջուկով «Խեցգետնիկներ-Կոնտի» կգ «Սագի տոտիկներ-Կոնտի» կգ Կարամել զովացուցիչ միջուկով «Սնեժոկ-Կոնտի» կգ Կարամել ջնարակված «Խեցգետնիկներ-Կոնտի» ջնարակով կգ Թխվածքաբլիթ «Բուրատինո կաթ» կգ «Բուրատինո ընկույզով» կգ «Բուրատինո չամիչով» կգ «Բուրատինո տեսականի» կգ Թխվածքաբլիթ ջնարակված «Մատնաչափիկ» կգ Թխվածքաբլիթ կշռված-փաթեթավորված «Բուրատինո ընկույզով» 450գ «Բուրատինո կաթով» 450գ Կոնֆետներ ջնարակված պոմադային կորպուսով Մրրկահավի երգը կգ Գարնան ծիծեռնակ կգ Երիցուկ-ոսկեգույն կգ Կարամել կաթնային միջուկով Մու-ու-ու կգ Կարամել շոկոլադե-ընկուզե միջուկով «Խեցգետնիկներ-Նավաստիներ» կգ Կրեկեր Կոնկուր-Ուրախ ձկնիկներ կգ Կոնկուր-Ուրախ ձկնիկներ 250գ 5. «Ապեյրոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «Ռոշեն» /Ուկրաինա, ք.Կիեվ/ «Հրուշակեղենային կորպորացիա» Դուստր Ձեռնարկության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում, և նրա կողմից ՀՀ տարածք մատակարարվում են ապրանքների հետևյալ տեսակները. Արտադրանքի անվանումը Չափ-ման միա-վորը 1 միա-վորի քաշը Քանակը արկղերով Պահպանման ժամկետը Արժեքը ԱՄՆ դոլարով Ծանոթություն Շոկոլադ Չայկա, Ալյոնկա հատ 100գ 44 հատ 12 ամիս 0.48 Չայկա, Ալյոնկա հատ 50գ 50 հատ 12 ամիս 0.26 Տուփեր Թռչնի կաթ /հարած կարագով/ հատ 250գ 10 հատ 3 ամիս 1.43 Թռչնի կաթ /հարած կարագով/ հատ 150գ 10 հատ 3 ամիս 1.02 Մոնտե-Քրիստո /բալ-կոնյակ, բալ-բալի լիկյոր/ հատ 196գ 10 հատ 10 ամիս 1.34 Մոնտե-Քրիստո /կոնյակի լիկյորով/ հատ 192գ 10 հատ 10 ամիս 1.04 Մոնտե-Քրիստո /ռոմ-լիկյոր/ հատ 192գ 10 հատ 10 ամիս 1.04 Բալը շոկոլադում բալի լիկյորով հատ 313գ 5 հատ 10 ամիս 2.59 Բալը շոկոլադում բալի լիկյորով հատ 157գ 14 հատ 10 ամիս 1.49

Կշռային կոնֆետներ
Կարմիր կակաչ կգ 1 2.7կգ 6 ամիս 4.04
Կարա-կում կգ 1 2.7կգ 6 ամիս 4.04
Սկյուռիկ կգ 1 2.5կգ 6 ամիս 5.53
ՌոԿոԿո /ընկույզ-կրեմ, կրեմ-նուրբ, կրեմ-կիտրոն կգ 1 3.5կգ 8 ամիս 4.87
Պոմադա /շոկոլադե ջնարակով/
Երիցուկ /սերուցքային կրեմ-բրյուլե/ կգ 1 2.8կգ 6 ամիս 2.72
Պոմադա կաթնային /առանց ջնարակի/
Ռոշեն կովիկ կգ 1 5կգ 3 ամիս 2.15
Կոնֆետներ վաֆլիով
Ուրախ կռունկ կգ 1 2.4 8 ամիս 2.20
Վայրի կարապներ կգ 1 2.4 8 ամիս 2.20
Կարաբաս-Բարաբաս կգ 1 2.4 8 ամիս 2.20
Կախարդական աքլորիկ կգ 1 2.4 8 ամիս 2.90

Դոնդողային կոնֆետներ
Բոնի-ֆրուտ կգ 1 3կգ 6 ամիս 1.58
Բոնի-ֆրուտ հատ 200գ 25հատ 6 ամիս 0.36
Կշռային կարամել
Սառնաշաքարային
Բարբարիս, Դյուշես,
Անանուխի կգ 1 2կգ/4տուփ 12 ամիս 1.32

Կապրի /կաթ/ կգ 1 1կգ/5տուփ 12 ամիս 2.00
Լիկյորի միջուկ
Դուբոկ կգ 1 5.5կգ 8 ամիս 1.27
Դիմակահանդես կգ 1 5.5կգ 8 ամիս 1.27
Շոկոլադե ջնարակով
Լեկորդ Միքս կգ 1 5.5կգ 8 ամիս 1.97
Շոկոլադե-ընկուզե ջնարակով
Խեցգետնիկներ կգ 1 5.5կգ 8 ամիս 1.74
Կշռված փաթեթավորված կարամել
Նորդ Լայթ,
Նորդ+էվկալիպտ,
Նորդ էքստրա,
Նորդ հատ 41գ 24 հատ*12 բլոկ 12 ամիս 0.10
Այյուրավոր կշռային
Կառնավալ կգ 1 4.3կգ 3 ամիս 1.95

6. «Ապեյրոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «Կոնդֆիլ» Խմելնիցկի հրուշակեղենի գործարան ՓԲԸ-ի ներկայացուցիչը ՀՀ-ում, և նրա կողմից ՀՀ տարածք մատակարարվում են ապրանքների հետևյալ տեսակները.

Կարամել մրգային-հատապտղային միջուկով- Կարդինալ
Սառնաշաքարային կարամել - Բարբարիս, Դյուշես, Անանուխի
Կարամել պրալինային կաթնային միջուկով - Խեցգետնիկներ, Մու-մու կովիկ
Կոնֆետներ - Սրճային

7. «Ապեյրոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «Ժիտոմիրի լասոշչի» ՓԲԸ-ի բացառիկ ներկայացուցիչը ՀՀ-ում, և նրա կողմից ՀՀ տարածք մատակարարվում են ապրանքների հետևյալ տեսակները.

Կարամել մու-մու, պտաշկա, խեցգետնիկներ-կոզաչկի
Թխվածքաբլիթ Բանկիր, Սահարա գիշեր, Սահարա՝ հարած կաթի համով, Տաքսի, Պասսաժ, Կոնտրաստ, Պարադիզ, Եվրոպական

Կոնֆետներ Աֆինա-կապուչինո; աֆինա հարած կաթ; աֆինա-շոկոլադ; տոֆիկ-խտացրած կաթ; տոֆիկ-կարամել; տոֆիկ-սերուցք; տոֆիկ-ընկույզ; թռչնի կաթ; թռչնի կաթ ծիրանաչրով; թռչնի կաթ սև սալորաչրով; թռչնի կաթ տրոպիկ; կլյովո նուգա գենտընկույզ կարամել; կլյովո նուգա գենտընկույզ; կլյովո նուգա վանիլին; կլյովո նուգակակաոփ-կարամել; կլյովո նուգա կակաո; կլյովո նուգա կարամել; վուալյա բեյլիս; վուալյա-կուանտրո:
8. «Ապեյրոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «Խերսոնի հրուշակեղենի գործարան» ՓԲՏԸ-ի ներկայացուցիչը ՀՀ-ում, և նրա կողմից ՀՀ տարածք մատակարարվում են ապրանքների հետևյալ տեսակները.

Կոնֆետներ՝ գիշերային էտյուդ
երկնային ծիծեռնակներ
համի համաստեղություն անտառային ընկույզ
համի համաստեղություն-նուշ
հպարտ մրրկահավ
մոն ամուր
Կարամել՝ խուշետյան պտաշկա
խերսոնի մու-մու
խեցգետնիկ

9. «Ապեյրոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «Օդեսսակոնդիտեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը ՀՀ-ում, և նրա կողմից ՀՀ տարածք մատակարարվում են ապրանքների հետևյալ տեսակները.

Կարամել՝ Սնեժոկ
Սագի տոտիկներ
Լյուքս Սկյուռիկ
Լյուքս Դուբոկ
Լյուքս Ումկա
Խեցգետնի վզիկներ
Խեցգետնիկներ

Իրիս՝ Ոսկե բանալի
Քիս-Քիս

Կոնֆետներ՝ Կովիկ

Կոնֆետներ՝ ԼՅՈՒՔՍ Ռետրո պնդուկ
ԼՅՈՒՔՍ Ռետրո Բեյլիս
ԼՅՈՒՔՍ Երիցուկ
ԼՅՈՒՔՍ Խոկոլադե երիցուկ
ԼՅՈՒՔՍ Երիցուկ խտացրած կաթ
ԼՅՈՒՔՍ Երիցուկ սերուցք
ԼՅՈՒՔՍ Ծիծեռնակ
Թռչնի կաթ վանիլային
Թռչնի կաթ սերուցքային
Կոնֆետներ՝ ԼՅՈՒՔՍ Կարա-Կում
ԼՅՈՒՔՍ Կարմիր կակաչ
ԼՅՈՒՔՍ Ոսկե արտեր
ԼՅՈՒՔՍ Գիշերային լույսեր
ԼՅՈՒՔՍ Վերնիսաժ չամիչով
ԼՅՈՒՔՍ Վերնիսաժ ծիրանաչրով
Սկյուռիկ գետնընկույզով
ԼՅՈՒՔՍ Գրիլյաժ հարավային
ԼՅՈՒՔՍ Գրիլյաժ արևելյան
ԼՅՈՒՔՍ Գրիլյաժ կաթնային
ԼՅՈՒՔՍ Պրոմեթևս
ԼՅՈՒՔՍ Արքայախնձորի
Կոնֆետներ՝ ԼՅՈՒՔՍ Կարմիր գլխարկ

	Շոկոլադ՝ Չայկա Տորթ վաֆլե-շոկոլադե՝ Ներշնչանք Տորթ վաֆլե-շոկոլադե՝ Ներշնչանք կաթ Տորթ վաֆլե-շոկոլադե՝ Ներշնչանք ընկույզ Տորթ վաֆլե-շոկոլադե՝ Ներշնչանք շոկոլադ Պետական տուրքի հարցը համարել լուծված: Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում: ԴԱՏԱՎՈՐ՝ Գ.ԿԱՐԱԽԱՆՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	26-01-2009
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Ամսաթիվ:	27-02-2009
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	31-01-2011
էջերի քանակը:	192, 161
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	31-01-2011
էջերի քանակը:	192, 161
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 19 Մայիս 2011